ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԴՐԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ապահովագրության պայմանագիր վաղաժամկետ դադարեցման դեպքերն ու պայմանները

1.1. Ապահովագրական հատուցման երկարաժամկետ վճարմամբ դժբախտ պատահարներից ապահովագրության կանոնների (այսուհետ՝ Կանոններ) համաձայն՝ ապահովագրության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) գործողությունը վաղաժամկետ դադարում է հետևյալ դեպքերում՝

1.1.1. Ապահովագրված անձի մահանալու դեպքում,

1.1.2. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելու գծով իր պարտավորությունները ամբողջությամբ կատարելու դեպքում,

1.1.3. Ապահովադրի կամ Ապահովագրողի՝ Պայմանագրից ցանկացած պահի վաղաժամկետ հրաժարվելու դեպքում, պայմանով, որ Պայմանագրից հրաժարվող կողմը այդ մասին ոչ պակաս, քան 15 օր առաջ պետք է ծանուցի մյուս Կողմին,

1.1.4. Ապահովադրի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման դեպքում, եթե վերջինս համաձայն չէ Կանոնների 5.13 կետի համաձայն կատարված փոփոխությունների և/կամ լրացումների կամ Կանոնների 6.3.6 կետի համաձայն Պայմանագրի վերանայված պայմանների հետ,

1.1.5. Ապահովագրողի նախաձեռնությամբ՝ Ապահովադրի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետներում ապահովագրավճարի չվճարման (տարաժամկետ վճարման դեպքում՝ դրա հերթական վճարումը չկատարելու) դեպքում,

1.1.6. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ,

1.1.7. ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Կանոններով կամ Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

2. Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարների մեծության չափը և հաշվարկման կարգը

2.1. 1.1.3 կամ 1.1.4 կետերով նախատեսված կարգով Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարների և կատարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, ընդ որում՝ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Վ_Ա = \frac{Ա_Վ \times 75\% - Հ_Վ}{Օ_Պ} \times Օ_Չ$$

որտեղ՝

$Վ_Ա$ – ն Ապահովագրողի կողմից վերադարձան ենթակա ապահովագրավճարի մեծությունն է,

$Ա_Վ$ – ն Ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարի մեծությունն է,

$Հ_Վ$ – ն վճարված և/կամ վճարման ենթակա ապահովագրական հատուցումների մեծությունն է,

$Օ_Պ$ – ն Պայմանագրի գործողության օրերի քանակն է,

$Օ_Չ$ – ն Պայմանագրի դադարեցման պահին Պայմանագրի գործողության չլրացած օրերի քանակն է:

2.2. Կանոնների 1.1.3 կետով նախատեսված կարգով Ապահովագրողի նախաձեռնությամբ Պայմանագրի լուծման դեպքում Ապահովագրողն Ապահովադրին վերադարձնում է Պայմանագրի գործողության չլրացած օրերի համար վճարված ապահովագրավճարը առանց որևէ մասհանումների:

2.3. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման՝ սույն փաստաթղթում ներկայացված դեպքերից բացի այլ հիմքերով Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում Ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարի մեծության չափը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: